

“Droschak”

ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :
Rédaction du “Droschak”
GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Պ Ա Ր Տ Ք Ի Հ Ե Ր Օ Ս Ն Ե Ր Ը

Տխուր իր կորուստներով, բայց որքան նշանակալից են հիմա մանաւանդ սեպտեմբերի այդ արիւնահեղ ընդհարումները, որոնք անմոռաց գլուխ մը կուգան աւելցնել ֆէդայական կռիւներու փառապանծ տարեգիրքին:

Օսմանեան աղբիւրներէ ներշնչած առաջին հեռագրերէն իսկ դժուար չէր գուշակել թէ Երլորդին մը տահոգութիւն պատճառով այդ պատահարները սովորական բաներ չէին:

Եւ արդարեւ իրարու ետեւէ հասնող երկու թղթակցութիւններ — մասամբ իրար լրացնող — կուգան հաստատել մեր վախը, որ զգացած էինք առաջին հեռագրերը ստանալուս:

Գաշնակցութեան զինակիր խումբերէն մէկը իր ճամբուն մէկ մասը ապահով ու անվտանգ անցնելէ ետք, Բայազիդի Այնթապ գիւղին մօտ կը բաղխի յանկարծ թշնամի շարքերու...

Ֆէդայիներուն փնտրածը ատ չէր հիմա, բայց ելք չկար, և բռնաւորւած, կամայականայ խումբը կը հարկադրուի կրակ բանալ, ճամբայ բանալու համար...

Եւ հերոսական քաջագործութիւններու երկար շարք մը ահա կը գծէ այդ ուղին, Բագրեանդի խորոս լեռներէն մինչև Նազիկի նազուկ ամրոցը: Համիդիէներ, հասնանցիք, կանոնաւոր զինուորներ իզուր կը ձգնին փոխ իփոխ իրենց ահաւոր կոյտերուն տակ ձգնելու այդ բուռ մը քաջերը, որոնք անօթի ու ծարաւ կը յառաջանան անվկանդ, կը յառաջանան, ճեղքելով թշնամի շարքերը հրով ու սրով, և կ'անհետին յանկարծ առասպելի դեւերու պէս, սարսափի ուրաւականը և արիւնի ակօս մը ձգելով իրենց ետեւէն...

Տակաւին ծանօթ չեն մեզ այդ հերոսական ընդդիմադրութեան բոլոր գրեզները: Քիւրդի մը պատմածը, մեր առաջին թղթակցութեան մէջ հաղորդուած, անոր առաջին գրեզը կը կազմէ հաւանորէն, իսկ հետագաներն ալ երկրորդ թղթակցութիւնը համառօտիւ միայն կ'ուրագծէ:

Այդ առաջին գրեզն արդէն կը բաւէր յատկանշելու երկու հակամարտ կողմերը:

Քիւրդը մոռցած չէ տակաւին թէ «ֆէդային գնդակը կը հետապնդէ զինքը, կը գտնէ ու կըսպաննէ» և վատերը, մահէն վախնալով, և իրենց բազմութեան վրայ վստահ կ'առաջարկեն ֆէդայիներուն, որ անձնատուր լինին իրենց:

Անմիտ ու լիրբ կատակ մը... յանձնել հրացանները... անձնատուր լինել քիւրդին...

Բայց ֆէդային ուխտած է այդ հրացանները տեղ հասցնել իր կեանքին գնովը, կանգ չառնելով ոչ մէկ զոհողութեան առջև, ոտնակոխ ընելով ամէն արգելք: Որքան քրտինք ու արիւն արժած էին իր այդ անշունչ, բայց միակ բարեկամները, և դեռ քանի՛ կեանքեր փրկելու սահմանւած...

Ֆէդային չի դաւաճաներ իր ուխտին. մահուան պրկուածներու մէջ սառած իր ձեռքն իսկ պիտի մերժէ իր հրացանէն անջատելը:

Եւ քաջերը քաջի պատասխանը տալէն ետք, իբր պատրաստուին թանկ ծախելու իրենց հրացանները և իրենց կեանքը...

Կատաղի կռիւներու այդ շարքը թեթև կորստով մը չէր կրնար վերջանալ անշուշտ. բայց թշնամիին կորուստը, որ գրեթէ տասնապատիկ աւելի կը ներկայացնէ լրաբեր քիւրդը, անբաղդատելի կերպով մեծ պէտք է համարել եթէ ինկատ առնելին անհաւասար պայմանները: Եւ ատ լոկ կը բաւէ ապացուցելու թէ ինչ մոլեգնութեամբ կուտան հայերը, մանաւանդ ձեռնամերձ ճակատամարտին ատեն:

Սակայն այդ նկատուածները միթարելու համար պէտք կուգան միայն. կորուստը կորուստ է. այդ մեռնող քաջերը տարբեր կերպով կարևոր օրւան մը մէջ կը տենչային ու կրնային մահը տեսնել...

Եւ հոգ է արդէն իրենց մահուան բուն եղբրական կողմը: Ի՞նչ գործ ունէին այդ մշեցիին ու խլաթցիին, այդ մանազկերտցիին ու առձէշցիին, վասպուրականի ու Տարօնի այդ սովատանջ ու ջարդակոծ գաւառներու արի զաւակները, ի՞նչ գործ ունէին, կ'ըսենք, այդ լեռներուն ու առապարներուն մէջ. ի՞նչը կը գրդէր հովէն ու արևէն մրկած այդ դաժան դէմքերը, արհամարհել ցուրտն ու բուքը, քաղցն ու ծարաւը խեղդել, և, հեռու մարգարնակ վայրերէ, գիշերը ցորեկ ընելով, քալել, անդադար քալել, թանկագին բեռը իրենց ուսին ու մահուան արհաւիրքը աչքերնուն առջև...

Որովհետև այդ մարդիկը ահռելի ուժգնութեամբ մը կը զգային թէ ինչպէս օրէ օր աւելի խոր կը խրելն իրենց միսերուն մէջ ծծոցները այդ քստմնելի մակաբոյծին — օսմանեան բռնակալութիւն կողմէ — որ կը սպառնայ քամել ու չորցնել Թիւրքիոյ հայութիւնը, եթէ ժամ առաջ հզօր ճիգ մը չպատրաստուի հեռու նետելու այդ զազրելի օրգանիզմը...

Ինչ ջանքեր չթափեցին մինչև հիմա մեր թշնամիները յեղափոխական ոգին հայութեան մէջ վերջնապէս մարած հռչակելու, և հայ ժողովուրդը ներկայացնելու իբր յուսահատ թշուառ մը, որ չոր հացի փրփուռ մուրալով զբաղած է միայն: Ցանջուող հայը տաւ իր պատասխանը: Քօշկայ լեռան, Քաթավիւնի և Փրխուսի կրօնները պերճախօս կերպով երևան կը բերեն թէ ինչպէս կը հասկնայ իր դրութիւնը երկրին ժողովուրդը և թէ ուր կը փնտռէ իր խրատունները:

Անցեալ անգամ այս էջերուն մէջ ակնարկելով այն Գործին, որ ժողովուրդը կը սպասէ յեղափոխական կազմակերպութենէն, անդուր յամառ և երկար աշխատանքի մը պէտքը մատնանիշ կ'ընէինք, ձեռնարկած ջանքերը յաջողութեամբ պսակել կարենալու համար:

Որո՞ւ մտքէն կ'անցնէր որ այդ տողերը գրած միջոցին այդ Ծրագրին մէկ մասն իրագործելու հետամուտ խումբերէն մէկը, հայաստանցիներ, հարկադրած պիտի գտնուէին, ճակատագրին դառն անակնկալով մը, իրենց կեանքի զոհին իսկ փայլուն ապացոյց մը բերելու կատարած և կատարող ճիգերու մեծութեանը... Որովհետև յուսահատի ոգորումներ չեն սեպտեմբերի այդ կռիւները: Անդուր անդադրում զարգացող և տարածող, բազմաձգի, հզօր ու աներևոյթ ցանցի մը օղակներէն մէկուն շնորհալից խորտակումն է ատ, որ յոյսի և գործի հեռապատկերներ կը բանայ յուսահատութեան մէջ խեղդել տալ ուլուղ ժողովուրդին...

Սեպտեմբերի այդ հերոսական կռիւները չեն կրնար մոռցուիլ և չպիտի մոռցուին:

Ցանջուող հայ ժողովուրդը հպարտութեամբ ու խանդաղատանքով պիտի յիշէ այդ քաջերը, որոնք մահը գրկեցին, մահուան դէմ զինելու համար իրենց եղբայրները: Հայ յեղափոխութիւնը պիտի պարծի ատոնցմով, որոնք գիտցան իրենց պարտքը կատարել իրենց կեանքին զոհով, հաւատարիմ ֆէդայի-զինուորի նշանաբանին:

Հանգիստ ձեզ, թանկագին ընկերներ, որ յաւիտենական քունը կը ննջէք Արածանիի ալիքներուն և նազիկի ծփանքներուն օրօրին տակ...

Ձեր յիշատակը ուժ պիտի տայ մեզ մեր արդի ծանր ու դժնդակ պայքարը մղելու, և ձեր ուրախանները պահպան ոգին ու թշնամիին սարսափը պիտի մնան երկար արցունքներու այդ հովտին մէջ...

Դ Ի Ի Յ Ա Ջ Ն Ա Կ Ռ Ի Ի

ՉԻՆԱԿԻՐ ԽՈՒՄԲԻ ՄԸ ՅԱՂԹԱԿԱՆ ՉՈՒՆ

Բ Ա Գ Ր Ե Ի Ա Ն Դ Ե Ն Խ Լ Ա Թ

(ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻՍՏԷՆ)

20/2 հոկտեմբեր 98

Սեպտեմբերի առաջին օրերուն մէջ արիւնահեղ կրօնի մը տեղի ունեցեր է Բագրևանդէն գաղտնի անցնող մեր զինակիր խումբերէն մէկուն և քիւրդերուն միջև:

Ստոյգ տեղեկութիւններ ստացած չենք տակաւին մեր ընկերներէն, ուստի կամայ ակամայ հարկադրած ենք առ այժմ շատանալ կռիւ դաշտէն եկող քիւրդի մը պատմածով, որը կը փութանք հաղորդել ձեզ երկուստեք կորուստի մասին ամէն վերապահումով:

Այդ խումբը Բայազիդի Այնթապ գիւղին մօտերը կը հանդարտ ճիւղուած քիւրդի: Իր ներկայութիւնը մատնել չտալու համար, ֆէդայիները հարկադրած էին սպաննել ատոնք: Քիւրդերէն չորսը կ'իյնան, բայց երկուքը կը յաջողին փախչել ու խուճապ ձգել շրջակայքը:

Հայ ֆէդայիներ երևալու լուրը տակնուվրայ կ'ընէ մերձակայ քիւրդ ցեղերը: Քիչ ժամանակի մէջ խառնի-ճաղանճ հոծ բազմութիւն մը՝ քիւրդ, համրիէ, զինուոր — լրաբեր քիւրդին ըսելով 1,500-2,000 հոգի — կ'աճապարէ Այնթապ, ֆէդայիներուն առջևը կարելու:

Փախուստի ճամբանին կտրած — յանկարծակիի գալերնուն — մեր խումբը այր մը կ'ապաստանի, ուր պաշարած կը մնայ երեք օր:

Թշնամին, հակառակ իր թուով առաւելութեանը, չի համարձակիր գրոհ տալ սյրին վրայ: Քիւրդերու պատերազմական խորհուրդը, երկար վիճարանութիւններէ ետք, խոհեմութիւն կը համարի բանակցութեան մտնել պաշարածներուն հետ և առաջարկել անձնատուր լինել իրենց: Իսկոյն բերել կուտան Բագրևանդի Ս. Յովհաննէս վանքին վանահայրը և կը ստիպեն զինքը որ անձամբ տանի այդ առաջարկը և իր կողմէն ալ համոզէ ֆէդայիները:

Ասոնք յանդիմանելով վանահայրը քիւրդերուն առաջարկը ընդունելուն համար, կը պատասխանեն.

— Քիւրդերը կ'ուզեն մեր հրացաններն ստանալ, թող գան մեր ձեռքէն առնեն:

Վանահայրը ետ ճամբելէն ետք, ֆէդայիները դուրս կը խուժեն այրէն:

Կրկիսի կատաղի կռիւ մը:

Քիւրդին պատմելով, հայերը իրենց բազմահարածեան մօտիներով հրաշքներ կը գործէին, մինչդեռ քիւրդերը մէկ-մէկ միայն կրնային արձակել:

Թշնամին բազմապատկիւր տեսնելով, ֆէդայիները մարդ կը խրկեն Սերոբին իմացնելու իրենց տաքնապալի կացութիւնը և օգնութիւն խնդրելու անկէ: Սերոբը տունը չի գտնուիր այդ միջոցին, ուստի իր կինը, առանց ժամանակ կորսնցնելու, կ'առնէ Սերոբի խումբը — մօտ 200 հոգի — և կը փութայ կռիւ դաշտը, ուր քիչ ետք Սերոբն ալ կուգայ կը հասնի:

Նոյն ատեն քիւրդերն ալ կը դիմեն Բայազիդի փաշային, թնդանթներ խնդրելով անկէ, բայց մերժում կը ստանան:

Վուիւր կը վերջանայ Փէդայիներու նահանջով:

Հայերը կը կորսնցնեն 43 հոգի. երեք վիրաւոր ալ գերի կը բռնուին:

Քիւրդերուն կորուստը մօտ 300 հոգի կը հաշուի:

Թիւրք պաշտօնական աղբիւրները այդ Փէդայիները Մուշի, Բուլանըիի, Ելաթի և Առձէշի բնիկներ կը համարին. սպաննւած կը հաղորդեն 55 հոգի, երեք ալ վիրաւոր: Իսկ քիւրդերու փորուստի մասին պերճախօս կերպով կը պապանձին:

* * *

12/24 հոկտեմբեր 98

Այս պահուս կը ստանանք ընկերոջ մը համառօտ նամակը, որ բողոքովն նոր լոյս կը սփռէ X. զինակիր խումբին ունեցած ընդհարումներուն վրայ: Մէկ կուր մը չէ տեղի ունեցած, այլ շարք մը կուրներ, և քիւրդին պատածը — որը նախորդ նամակովս հաղորդած էի — անոնց մէկ միջադէպը կը կազմէ հաւանօրէն:

Սեպտեմբեր 3-ին առտուն՝ արշալոյսին, զինակիր խումբը կը հասնի Բագրեւանդի Քօշկայ լեռան ստորոտը, ուր մտադիր էր ցորեկը հանգստանալ գիշերը ճամբան շարունակելու համար: Փէդայիներու ներկայութիւնը կը մատնի սակայն և համդիէ ձիաւորներ առտունէ արդէն յարձակում կը գործեն յոգնած խումբին վրայ: Համդիէները կը փորձեն կատաղի արշաւով մը շփոթ ձգել խումբին մէջ, բայց մօսիւնի գնդակներու տարափին տակ կը հարկադրուին ետ դառնալ բազմաթիւ դիակներ թողնելով գետինը:

Այդ միջոցին օգնութեան կոչը արդէն հասած էր շրջակայքը. այլ և այլ տեղերէ կանօնաւոր զինուորներու խմբակներ ու քանի մը կատաղի քիւրդ աշերաթներ շատ չանցած կը լեցուին լեռան ստորոտը: Վուիւր կը բորբոքի աւելի կատաղութեամբ. մեր ընկերները, որոնք դիրք բռնած էին արդէն բլուրի մը վրայ, կուիւր կըսկսին պատերազմական երգերով: Մօսիւնները կարկուտի նման կը տեղացնեն գնդակները, և թշնամին բաւական կորուստ կըրելով, մոլեգին ձիւրեր կը փորձէ Փէդայիները իրենց դիրքէն խախտելու. իզուր. առասպելական գնդակները մահուան մանգաղին պէս կը հընձէին առաջին շարքերը, իսկ երգերու խրոխտ ու բամբակ հնչիւնները յուսահատութիւն միայն կը ներշնչէին քիւրդերուն:

Վուիւր կը տեւէ ամբողջ օրը, մինչև մութը կոխելը: Թշնամին հակառակ իր բազմութեան չի յաջողեր մօտենալ Փէդայիներուն, և բաւական զոհ կուտայ. մերիները այդ ամբողջ օրը ոչ մէկ կուրուստ չեն ունենար:

Մութը պատելէն ետք զինակիր խումբը բլուրին հակառակ կողմէն աննկատելի կերպով կ'իջնէ և կը շարունակէ իր ճամբան: Երկու ժամ անընդհատ քայլելէն ետք, կը նստին հանգստանալու. հոգ ինքզինքը զգալ կուտայ հայ զինուորի բուն թշնամին. անթուութիւնն ու ծարաւը: Ամբողջ այդ օրը և նախորդ գիշերը բան մը կերած չէին, որովհետև վերջին իջևանէն չէին յաջողած հաց առնել և յոյսերնին դրած էին

կուր պատահած տեղին վրայ: Վուիւրու ատեն ճիշդ է կը մոռցուի քաղցը, բայց աւելի սաստկութեամբ զգացուելու համար ետքը: Գէշը ան է որ ջուր ալ գտած չէին. և յայտնի է թէ որքան կը տանջէ ծարաւը, մանաւանդ կուէն ետք: Բայց ինչ կընային ընել անկարելիին դէմ. և ահա կը պատրաստուին ճամբայ ելլալու, երբ յանկարծ գիշերուան մութին մէջ կը լուսի ձիւրու դոփիւն մը... Քիւրդերն էին, որոնք կը հետապնդէին զինակիր խումբը, ցորեկան իրենց կորուստներուն վրէժն առնելու...:

Թշնամին կը նշմարէ մեր խումբը և չորս կողմէն կըսկսի թափուիլ ու շրջապատել. առաջ գնալ անկարելի էր, պէտք էր ձեղքելով ճամբայ բանալ:

Մթութիւնը կը նպաստէ թշնամին մօտենալու, և երկու կողմերը կը խառնուին իրար: Կըսկսի զարհուրելի ձեռնամերձ կուր մը: Մէկ վայրկեանի մէջ դաշոյնները կը շողան և կըսկսին իրենց աւերիչ գործը այդ խաւարին մէջ: Ճակատ ճակատի եկած էին, խնայել չկար հոգ: Փէդայիները կատաղաբար կ'իյնային դիմացը հանդպողին վրայ, կը զարէին, ոմանք սպանուողներու զենքերը կը վերցնէին և այդպէս անընդհատ կը յառաջանային դիակներու մէջէն: Ժամերով կը տեւէ այդ ճակատամարտը, մինչև մերիները կը յաջողին վերջապէս ճամբայ կտրել մինչև Քաթաւիկնա լեռը: Թշնամին սարսափած իր ունեցած կորուստէն, և չկրնալով այլևս դիմանալ Փէդայիներուն յարձակումին, ետ կը դառնայ հիմա, թողնելով հայրենիքի զաւակներուն շարունակել իրենց ճամբան:

Գիշերային այդ կուէն դարձող քանի մը քիւրդեր Փէդայիները զեւերու նմանցուցած են, պատմելով թէ ինչպէս անոնք առանց նշան առնելու կը տապալէին քիւրդերը, գլխէն կամ աչքէն հարւածելով:

Մերիները 8 ընկեր կը կորսնցնեն այդ գիշերուան կուրն մէջ:

Լոյսը սկսեց էր բացուիլ երբ կը հասնին Քաթաւիկնայի ստորոտը: Այս անգամ բարեբախտաբար ջուր կը գտնուի, բայց նորէն հաց չկայ. և արդէն երկրորդ օրն է որ յոգնած Փէդայիները բան մը դրած չեն բերաննին: Խումբին մէկ մասը մօտակայ գիւղ մը կ'երթայ հաց ձարելու, միւս մասը լեռը կը բարձրանայ դիրք բռնելու, որովհետև կուիւր կընար ցորեկը վերստին նորոգելի:

Կը լուսնայ վերջապէս. գիւղ գնացող ընկերները հաց վերցնելու ժամանակ չեն ունենար. գիւղին մօտը կամ մէջը կուրի կը բռնուին և կը ցրուին: Իսկ լեռը դիրք բռնողներու վրայ կուրի կուգան հասնանցի կատաղի քիւրդ աշերաթէն ձիաւորներու ստաբ խումբ մը: Լեռան խումբը թէև յոգնած, քնատ, անթի, և թուով նւազած, չ'ընկճէր և յանդգնութեամբ կը կուրի, ուխտած լինելով զենքը ձեռքին մեռնիլ կամ մեռնելը: Վուիւր կը տեւէ մինչև իրիկուն և թշնամին ետ կը քաշուի, դիրքերուն տիրանալէ յոյսը կտրած:

Այդ կուրի մէջ 6 ընկեր կ'իյնան:

Երբ մութը կ'իջնէ, Փէդայիները դիրքերը կը թողնեն և կըսկսին մաս-մաս հեռանալ: Այդ փոքր խմբակները իրարու հեռքը կորսնցնելով, անջատ անջատ կը շարունակեն ճամբանին:

Այդ խմբակներէն մէկը — 8 հոգի — հետևեալ օրը ջրաղաց մը կ'ապաստանի: Թշնամին հոտը կ'առնէ և

ջրաղացը կը պաշարէ: Տղայքը արդէն հաց գտած և կազդուրած լինելով, կ'որոշեն սուղ ծախել կեանքերնին և առիւծի պէս կըսկսին կուրի, թող չտալով որ մօտենան ջրաղացին: Քիւրդերը կը փորձեն նաւթով կրակ տալ շէնքին, բայց չեն յաջողիր. առաջ հրաշքի տեղ կ'անցնի ու վախ կը ձգէ քիւրդերուն սիրտը: Գեռ չմթնած՝ ֆէդայիները դուրս կը խուժեն ջրաղացէն ու ձեղքելով թշնամին, առաջ կ'անցնին, մէկ ընկեր միայն զոհ տալով ջրաղացին մէջ, մինչդեռ թշնամին հոգ ալ բաւական կորուստ կ'ունենայ:

Ջրաղացի խմբակը մօտակայ գիւղին մէջ կը հանդպի ուրիշ ընկերներու և ահա 25 հոգիի խումբ մը կազմելով, կը դիմեն երկրի ներսը և կը հասնին Խլաթի Փրխուս գիւղը (Նազեկ լճակի ափին):

Այս անգամ իրենց ետեւէն կը հասնի կանօնաւոր զինւորներու վաշտ մը և կուրը նորոգելով կը տեւեւ ամբողջ օր: Թիւրքերը այդ կուրին մէջ կը կորսնցնեն բաւական զինւորներ և հարիւրապետ մը: Ֆէդայիներէն զոհ կ'երթայ մէկը միայն, որ յանդգնութեամբ առաջ կը նետէր կուրի ատեն, սպաննւած ընկերներու վրէժով բորբոքւած:

Արևը մայր կը մտնէ, թիւրքերը կը քաշին, և այս անգամ կ'աներևութանան ֆէդայիներն ալ, առանց հետք մը սակայն թողնելու...

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

1/13 հոկտ. 98

Ճակատագրին մէկ հեղուկութեամբը ամէնէն հզօր բռնակալներն իսկ մահուան երկիւղէն խաղաղիք կը դառնան ոտքերնուն տակը չնթող սարուկներուն ձեռքը. և ասոնք մեծագոյն վարպետները եղած են միշտ այդ վախը շահագործելու մէջ:

Մեր վախկոտ Համիդիօն էր մնացել բացառութիւն կազմել: Խեղճը գիշեր-ցորեկ Դամոկլէսի սուրին պէս, հայ ուսմբ մը կը տեսնէ զլիւսն վրայ կախած, վայրկեանէ վայրկեան պատրաստ պայթելու, ու սարսափը քանի կ'երթայ կ'աճի ու կ'աճի սիրտին մէջ, նոյն իսկ անկախ հայ յեղափոխական շարժումին ընթացքէն: Խնդիրն ան է որ, անօթի ողորմելիներու լէզէօն մը, անունով և անանուն արարածներ, ամէն ազգէ և զասակարգէ, «գլխմամբը գլխն» — ինչպէս պիտի ըտէին հինքը — հրահրելու այդ սարսափը և Համիդիօն սիրտը անդադար դողի մէջ պահելու: Այդ զազրելի մակարոյձները բան գործ չինած են իրենց՝ օր նոր սուտ նոր մը հնարել պատրաստող յեղափոխական ցոյցերու և դաւերու մասին և վաղել տեղեկագրել պալատը իրենց հաւատարիմ աշակերտութեան վարձը մուրալու և... ստանալու անվրէպ յոյսով:

Եւ Երլորդի թշուառականը որ գլխէն մինչև պոչը կը ճանչնայ բոլոր այդ զեռունները ու գիտէ անոնց փորցալը — կը շոյէ ու կը շոյէ այդ տախակի գլուխները ու անոնց գոզը կը լեցնէ իր արիւնտա ոսկիներէն: Փիլիսօփայաբար կը նայի գործին. ի՞նչը պիտի պակսի, եթէ ականջ դնէ անոնց. ոսկիներ միայն. է՛, ողջ ըլլան հպատակները. իսկ եթէ չլսէ անոնց ու յանկարծ հազարէն մէկը իրաւ ելլայ... չէ՛ աւելի լաւ է հաւտալ ու անոնց երես տալ:

Եւ անա անվերջ կը շարունակուի այդ խաղը յոռի շրջանակի մը մէջ. գահակալութեան տարեգարձին կը յաջորդեն յեղափոխական տարեգարձներ, անոնց ետեւէն կը հասնի Վիլհէլմի մը այցը, ապա ռամազանը և այսպէս անընդհատ կը յաջորդեն իրարու «գաւադրա-

կան» օրերը, տարականոն ուղղութիւն մը տալով թիւրքի ներքին գործերուն:

Հայերը վերջին տեղը չեն բռնիր մակարոյձներու այդ վոճմակներուն մէջ. չէինք զարմանար սակայն — գիտնալով մեր բարքերուն արդի ցաւագին վիճակը — և բաւ կը համարէինք արձանագրել այդ ողորմելիներուն անունները, որոնք Նուրհանէն ու Բարթուղիմէօսէն ետք, Պիւլիւլեան, Նիկողոս Աղասեան, Յարութիւն Ապանեան և այլն կը կոչուէին...

Չէր արժեր իսկ յիշել ասոնք, եթէ նոր անուն մը մեր ուշը չհրաւիրէր պահ մը այդ սիրուր շարքերուն վրայ: Թիւրք առաջադէմ կոչւած մամուլին ներկայացուցիչներէն մէկը, մեր մէջ ալ բաւական ծանօթ բանասէր մը, Իգմիրլեանի նախկին քայտուղար մը — Տիրան Բէլէկեան — իր ընդունակութիւնը փորձել սկսած կը թւի հիմա այդ ասպարէզին մէջ: Արդեօք հին դերերը յոգնեցուցած են զինքը. շատ շուտ է սակայն Աղօտ կը յիշենք արդարեւ թէ մարտիկութեան 1890 թ.ին յեղափոխական շարժումը քաւած անցած էր Բէլէկեանի քովէն, ինչպէս քանի մը իր բարեկամներուն: Իմացանք որ երկու տարի չկայ, Եւրօպայէն չգարձած տակաւին, «Ժէօն թիւրք» կը համարուի եղբւր Լճողօնի մէջ: Գիտէինք որ իր «Ժէօն թիւրք», տխրահոշակ Մուրադին հետ գրեթէ միատեն վերապարձաւ Պօլիս, Ահմէդ ձէլալէդղինի պաշտպանութեան տակ, և պաշտօն ալ ըստացաւ: Անձնական Գանձուն նախարարութեան մէջ: Լսած էինք թէ ոսկի չգլխաները չէին Բէլէկեանը Պօլսի հետ կապողը, այլ ընտանեկան սէրը: Իր պատին համար ուզած էինք հաւտալ այդ բացատրութեան, թե ի՞նչ և ա՛րի տ մակդիրը բաւական համարելով այդ պիտով մօրուքով մարդուն համար, որ քիչ-չատ կարողացած ու աշխարհք տեսած ալ էր, որ գոնէ 1890-էն ետքը զիւրազանական կատակերգութիւն մը կալծելու չէր յեղափոխական շարժումը և իր ուժերը կշռելով ճամբայ ելլալու էր: Ամէն մարդէ հերօտութիւն չի պահանջիր, բայց ուսել չկրցած ապուրն ալ եփելու չէ:

Այս վճիռով կարելի էր մտացութեան քօղը քաշել այդ պարտնին երեսին վրայ, բայց Բէլէկեանը հանգիստ չի կենար. թաքուն յատկութիւններ կրկսին պղպշակի իր հոգիին մէջ. «Երիտասարդ թիւրք» երու մէջ ճարակող chantage-ի հրամայութիւնէն ինքն ալ վարակւած կը թւի: Ամիսներ առաջ անպատիւ մարդու մը, արքունի լրտեսապետին Ահմէդ ձէլալէդղինի յանձնարարութեամբ Եւրօպա մեկնեցաւ, յեղափոխականներու «օճախները» ոսկի անձրեւով մարելու համար: Առաքելութեան լուրը իրմէն առաջ հասաւ Եւրօպա և խեղճ Տիրանը չչմած, հաշիւներուն մէջ կանխած, լեզուն ներս քաշեց ու ծպտուն չհանեց: «Սապահ»-ին թղթակցելու համար մեկնեց է եղբւր Պարիզ: Թիւրքիսն, «Սապահ»-ը, Բէլէկեանի դարձն ու նոր պաշտօնը, Ահմէդ ձէլալէդղինի հետ իր բարեկամութիւնը իրապոյճներուն համար պոչաւոր սուտ մին էր ատ: Ու Բէլէկեան պոչին վրայ նայելով ետ դարձաւ:

Ժամանակը ասոր վրայէն ալ թերեւս իր սպունդը քսէր, եթէ դէպքերու նոր օղակներ չգային չղթայ մը լրացնելու: Սեպտեմբերի մէջ տեղեկագիր մը կը ներկայացուի պալատը թէ Ս. Խաչին օրը յոյց պիտի բնեն հայերը: Թէ հայ յեղափոխական կօմիտէները վերջնապիւր մը տուած են արդէն վից մեծ պետութիւններուն, պահանջելով 15 օրուան մէջ բարենորոգումներ մտցնել Հայաստան, սպառնալով, հակառակ պարագային, արիւնլայ ընել բովանդակ թիւրքիսն: Այդ տեղեկագիրը Բէլէկեանը կըստորագրէր:

Անցաւ Ս. Խաչը և հասաւ Պօլիս թիւրքիոյ մեծ խաչագողը՝ Վիլհէլմ: Բէլէկեան ներշնչուած մը կ'ունենայ, այս անգամ աւելի ցնցիչ ու խելքի աւելի մօտիկ սուտ մը հնարելու: Դաշնակցականները, կըսէ, կը պատրաստուին ռուսի նետել Վիլհէլմի կառքին վրայ, Սէլաիլըքէն դարձին Խօսք չկայ. ահա՛ զլուխ գործոյ մը որ համբաւին խարխին է:

Աւելորդ է ըսել թէ Բէլէկեաններու կարգի մարդոց

արարքները անակնկալներու շրջանէն ելած են շատոնց. 1890-էն ի վեր շատ առիթներ ունեցանք չափելու ու կրկին չափելու Պօլսի մեր բանասէրներուն ու խմբագիրներուն հասակը. շատերուն համար կայրէլի եղաւ ըսել, աւա՛ղ, «չափեցաւ եւ պակաս գտաւ . . .»

Քէլէկեանները աղէկ կ'ընեն եթէ քիչ մը կ'ընեն ըրածներուն հետեւանքները եւ սթափելով այն գզլիւիչ բուրումներէն — սրբ maitre-ի մը պէտք ունեցող «չօճուխներ» կը ծխեն անոնց քթին տակ — յիշեն թէ մուսուլման քրօնիկներն ու գրչերաջան իմաստակութիւնները քաղաքացական այն սերտ առաքնութիւնները չեն որ կրնան մեզմայնիչ տալ իրենց դատապարտելի ընթացքը այն երկրին մէջ, ուր կ'ենք ի ու մահւան պայքարը կը մերի այսօր . . .

* *

Երկու խօսք ալ մօլլա-կայրիպօսին վերջին արարքներու մասին, որոնք վերջնապէս կը յատկանշեն այդ անորակելի սրիկան:

Սասալիզի 96-ի ջարդէն վնասող ընտանիքներուն բաշխելու համար, Բ. Գուռը, ամէնայո՛ւ, 1,500 ոսկի յանձնած էր տեղապահ Բարթուղէմէօսին: Սուրբ գազանը շնորհակալութեամբ կը գրպանէ զբաժն եւ կըսուի . . . կալւածներ գնել, կարկանդակին փշրանքները միայն բաժին հանելով այդ թշուառներուն: Համբերութիւնը հոս ալ իր չափը ունի. աղչային իշխանութիւնները Օրմանեանի օրով սիրտ կ'ընեն վերջապէս հաշիւ պահանջելու նախկին տեղապահէն այդ գումարի գործադրութեան մասին: Ի՞նչ կ'ուզէք որ պատասխանէ մեր մօլլան. «Հաշիւը ես պալատ տւեր եմ, ձեր ի՞նչ գործն է»: Ուզողը թող երթայ հարցնէ պալատը, մեր գիտցածը սա է որ սրբազանը բաւական կըր գումարներ նետեց քանի մը (ազգայինձի) ներու կոկորդը, պատրիարքական վերջին ցնարութիւններու ատեն անոնց քէն չանկու համար: Այդ պարոններուն անունները ծանօթ են մեզ, բայց կը յետաձգենք հրապարակութեամբ, Վինչիւ քանի մը մանրամասնութիւններ ալ ստուգին:

Նուրբան ու Բարթուղիմէօս յուսահատողներէն չեն՝ գոնէ չար նպատակ մը հետապնդելու ատեն, ու դիտեն ամէն առիթէ՛ օգտուի: Մինչ զբաղւած էին — եւ հիմա ալ դեռ զբաղւած են — Սահմանադրութեան տակը փորելու, Սահ կաթողիկոսական խնդիրը կը բարդէր ու կը կծկէր: Գրուի զլխու տւին եւ հանձնարել գաւաճանութիւն մը յղացան: Հետեւեալ օրը պալատ ուղղած իր տեղեկագրերէն մէկուն մէջ մօլլա-սրբազանը էջմիածնի կաթողիկոսութիւնը հայ ազգին համար վընասակար հաստատութիւն մը կը ներկայացնէր, եւ միանգամայն թիւրքիոյ պետական շահերն ապահովելու միակ դարմանը կը նկատէր Կ. Պօլսի պատրիարքութիւնը ջընջել, ու Սահ դահը Պօլսի փոխադրելով անկախ հըռչակել էջմիածնէն: Պատրիարքական աւանդութիւններն ալ իսպառ սրբելու համար, կաթողիկոսարանը հաստատել կ'առաջարկէր Միջոգիւղի մէջ, Ալլահվէրդի Արբանամ ամիրային ապարանքը, բնականարար — զօրութեամբ հասկնալու է — Բարթուղիմէօսն ալ կաթողիկոս ընտրել տալով Տանն Կիլիկիոյ: Ի՞նչ փառաւոր զոյգ մը Ազարեանին:

Չենք դիտեր թէ շատ պիտի սուէ՞ տակաւին իրերու այս գայթակղակից ու խայտառակ կացութիւնը: Բարթուղիմէօսներ, Աշրփեաններ, Մեսրօպներ, Մինասեաններ խոզի պէս կը տապալակին սուլթանին ազտոտ ոսկիներուն մէջ, թափանչին կը մեծցնեն Վօսիօրի ափերուն վրայ, եւ ազգային ոչ մէկ գործի օգտակար ըլլալէ՛ գատ — ատ էր պակաս — քարեր ալ դեռ կը նետեն ազգի սալին խարխլած անիւներուն տակ . . .

Պատրիարքարանին պարտքն է այդ սեւսիրտ սեւապլուխներուն բերններուն չափը տալ եւ ճնթիկելիք տեղերին ցուցնել: Ա՛տ ալ մենք պիտի յիշեցնենք:

Ո Ւ Ժ Ե Ր Ի Հ Ա Մ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ժամանակը սահում է. մարդկային արտասուքի ու արհաւիրքների միջից գլորում են տարիները անզգայ, անտարբեր, ոմանց համար՝ արագ ու աննկատելի, ուրիշների համար՝ ծանր, սպանիչ դանդաղկոտութեամբ: Հայ յեղափոխական կազմակերպութիւնը արդէն մի ամբողջ տասնամեակ ունի իր ետեւում, և արիւնոտ գործունէութեան այդ առաջին տասնամեակը թւում է մի փոքրիկ յաւիտենականութիւն: Որքան անողորմ ու կործանիչ եղան ժամանակի ալիքները այդ համեմատաբար կարճ տարածութեան վրայ, որքան աշխատանք ու զոհողութիւն, որքան տանջալից անկալութեան օրեր . . . Ամէն բան կատարեց սակայն երկաթէ անհրաժեշտութեամբ: Տաս տարւան մէջ թէ ծանր աղէտները և թէ փառաւոր, յիշատակելի վայրկեանները, որոնք աւետեցին հայկական վերածնութեան մասին — հաւասարապէս անխուսափելի եղան. անցքերը յաջողեցին իրար ճակատագրական, արիւնալից շղթայակցութեամբ:

Ռամիկ տրամաբանութիւնը չըմբռնեց այդ: Անցքերի պատմութեան մէջ պատահականութիւններից զատ ուրիշ բան չտեսնելով՝ նա, խելագարութեամբ, յեղափոխութիւնը պատասխանատու բռնեց անցեալ աղէտների ու ներկայ ճգնաժամի համար: Եւ յեղափոխութեան դէմ սկսեց հալածանքը — մի հալածանք նոյնքան անմաքուր, որքան և անտրամաբան: Այն ինչ հասարակութեան առողջ ու մտածող տարրը գլխաւորապէս յեղափոխականներին դէմ ուղղեց իր յարձակումները: Եւ շատ հիմնաւոր պատճառներով: Յեղափոխութիւնը բռնաբարում էր, «գործիչ» հըռչակածները շահագործում էին նրա անունը գձուձ միտումներով: Ի՞նչպէս չյարձակուել, չքննադատել . . . Դժբախտաբար այդ քննադատութիւնը հետզհետէ վերածեց մի հիւանդոտ տրամադրութեան: Հասարակութեան մի ստւար մասում օր աւուր շեշտեց բացասական դիրքը գէպի գործիչներն ընդհանրապէս: Նախկին խանգավառութիւնը պահեց, յեղափոխութեան գաղափարը՝ երբեմն փայփայեւած ու փառաբանեւած՝ զգալապէս նսեմացաւ շատերի աչքում, շատերը երես դարձրին նրանից:

Սակայն յարատե ոչինչ չկայ: Հիւանդոտ տրամադրութիւնը ժամանակաւոր և վաղանցուկ է, ինչպէս որ ժամանակաւոր է քաղաքական իրողութիւններին ներկայ աննպաստ զուգորդութիւնը հայոց հարցի նկատմամբ: Յեղափոխական գաղափարը գործի վրայ է. կը բերելով, գալարելով նա ճեղքում, անցնում է անթիւ խոչընդոտների միջից և ձգտում է գէպի իր բնական նպատակակէտը: Հալածեւած՝ նա նորից հպարտութեամբ գրուի է բարձրացնում. բռնաբարւած շահախնդիր «գործիչներից»՝ նա ահեղապէս սպառնում է իր դէմ մեղանչողներին: Նրանով է ապրում ու շնչում գործող կազմակերպութիւնը: Նրա կողմն են ազգի թարմ ու կորովի տարրերը, նրա դէմ՝ են թուլամորթներն ու ապիկանները: Եւ գաղափարը հզօր ու անպարտելի՝ պիտի շարունակէ իր յառաջխաղացութիւնը: Հայհոյեւած ու ամբաստանեւած՝ նա վերստին պիտի գանէ ինքզինքը հասարակական մեծամասնութեան հասուն գիտակցութեան մէջ: Այդ յաղթական ընթացքին պիտի նպաստէ ամէն

կերպ գործող մարմինը, որը յեղափոխական գաղափարի թէ ծնունդն է և թէ դայեակը միաժամանակ:

Գաղափարի ուժը կազմակերպութեան մէջ է և կազմակերպութեան ուժը գաղափարի մէջ. մինը առանց միւսի գատարկ է: Յեղափոխական կազմակերպութիւնը եթէ չէ տոգորւած այդ գաղափարով՝ գատարկ ձև է միայն, արստրակցիա, ոչնչութիւն: Ազատութեան և արդարութեան բոլոր իդէալները ծաղր ու ճեղքութիւն կը մնան, եթէ նրանցով չեն ներշնչուած գործող մարմնի անդամները: Իսկ երբ մի կազմակերպութեան ամէն մի անդամի և ամբողջութեան մէջ յարգում է գաղափարը, երբ նա այդ գաղափարը թէօրիայից գործնականին վերածելով՝ կատարում է իր պարտքը ընտրած ասպարէզի վրայ, — մի այդպիսի մարմին լիապէս արդարացնում է իր գոյութեան իրաւունքը. նա կանգուն կը մնայ և ոչ մի հողմ — արտաքին թէ ներքին — չի կարող խարխլել նրա հիմքերը: Այդպիսի մի մարմին երկիւղ ու պատկառանք է ներշնչում թշնամուն. նրան ատում են, հայհոյում ու հալածում են, նրան հալածում են իբրև մի ուժ, որ անյողողող որոշած է մինչև վերջ մղել կեանքի ու մահուան պայքարը:

Այդպիսի մի մարմին ներքին քննադատութիւններից ևս բնաւ երկիւղ չունի: Լինելով ինքը ժողովուրդի դաստիարակութեան մի գործօն՝ նա, ընդհակառակը, կարող է միայն հրճել քննադատութեան երևոյթով, որը ժողովուրդային ինքնագիտակցութեան զօրաւոր արտայայտութիւններից մէկն է: Բայց միայն բանաւոր ու բարեխիղճ քննադատութեան: Տարաբախտաբար այդ վերջինը առ այժմ՝ աննշան չափերով է գործադրւում: Անաչառ քննադատութեան տեղ՝ մենք յաճախ ականատես ենք լինում փողոցային ամբաստանութիւնների, անմիտ, անիմաստ գոռում-գոչումների: Ֆրազայի հերօսները աւելի քան երբ և իցէ, բազմացել են այսօր, և նրանք են, որ յաճախ իրենց ոչնչութեան անդունդից յանցաւոր թեթեւամտութեամբ քարեր են նետում բուն գործիչների վրայ: Տարակոյս չկայ, որ ժողովուրդը քննադատօրէն պէտք է վերաբերւի դէպի յեղափոխութեան վարչական մարմինները, սակայն պէտք է նաև, որ անպայման յարգւի բուն գործիչների բարոյական հեղինակութիւնը, որը նոյնանում է յեղափոխական գաղափարին:

Դժուարին ժամանակներում ենք ապրում, և գործող յեղափոխական մարմնի վրայ բարդում են ծանրածանր պարտականութիւններ: Մղած իր պարտքի զգացումից՝ նա պիտի ձգտէ միշտ աւելի և աւելի կազմակերպել յեղափոխութիւնը. և անխնայ պիտի հալածէ բոլոր այն ուժերը, որոնք մեր թշնամու հետ գիտակցօրէն թէ անգիտակցօրէն միաբանուած՝ ձգնում են կազմակերպել յեղափոխութիւնը: Նա պիտի աշխատէ թուլացնել ներսում՝ «չէզոքութեան» ու յոռետեսութեան համաճարակը, որպէս զի կարողանայ աւելի ամուր պատուար կազմել զրսի հալածանքների դէմ: Նա պիտի աշխատէ վերջապէս — առաջնորդելով հանրային կարծիքի ողջամիտ թելադրութիւններից և վանելով տղայական հարայ-հրօցները — ըստ կարելոյն շուտ վախճան դնել յեղափոխական ասպարէզում ծագած բազմաթիւ թիրիմացութիւններին, թշնամական, հակամարտ ձգտումներին և բարձրացնել գործը մինչև իր արժանաւորագոյն աստիճանը: Յեղափոխական գաղափարը սկզբներում հաստատուելուց և ապա ժխտուելուց

յետոյ՝ պիտի յանգի մի գերագոյն համադրութեամբ իր բաղձալի շրջանին, որի գծերը ընդնշմարում ենք արդէն. դա կը լինի նրա զօրացումը յեղափոխական բոլոր անաղարտ գործիչների բնական դաշնակցութեան մէջ: «Միութեան» խնդրի կնճռոտ հանգոյցը կը լուծւի վերջապէս. հարկաւոր է միայն հասարակութեան սանարիւն ու բանգէտ վերաբերումը, որ այնքան փափագել է ներկայ պարագաներում: Յամառ, օրթօգօքս կուսակցականութեան դաւանողներից չենք, և գործօն ուժերի վերը յիշած համախմբումը իրագործելի ենք սեպում: Նա միանգամայն անհրաժեշտ է: Երբ անկեղծ, գործունէութեան ծարաւի ուժերը դէմ առ դէմ կանգնին փոխադարձ հաւատով ու վստահութեամբ, երբ ասպարէզից վերանայ առելի mauvaise foi-ն, ոմանց անասնական եսապաշտութիւնը, ուրիշների դաւասիրութեան ոգին, այն ժամանակ համերաշխ գործակցութեան համար ամէն խոչընդոտ կը շոգիանայ: Այդ համերաշխութիւնը գլուխ չեկաւ մինչև օրս, և մենք առաջիններն ենք, որ ցաւում ենք: Պէտք է գիտնանք սակայն ջոկել իրական ճանապարհը ցնորականից: 2 յափշտակիւք և չգայթակղիւք «միութեան» «հրաշագործութիւններով»: Միութիւն կայ, որ առաջին վայրկեանից իսկ կազմալուծման սաղմեր է բովանդակում իր մէջ: Ասպարէզը շատ է ծանրաբեռնուած անօգուտ և վնասակար ուժերով: Պէտք է մաղել: Գործը սկսած է. պէտք է շարունակել: Ինչ փոյթ, թէ մի կարգ «գործիչներ» յեղափոխական գեղակից և կամ հասարակական դատաստանից շանթահարած՝ պիտի կորչին մեր սիրած գործի համար... քչւոր լինենք ասպարէզի վերայ, բայց առաքինի, յեղափոխական յատկութիւններով օժտուած լինենք. գործը յարգենք, գործով ոգևորւինք, և ոչ թէ նրան դիմակ դարձնենք մութ, շահադիտական խորհուրդների համար:

Հոգանք, որ յեղափոխութիւնը աճի ոչ այնքան տարածութեամբ, այլ մանաւանդ խորութեամբ: Այդ է եղել Հ. Յ. Գաշնակցութեան ամենակիզիչ հոգսը սկզբից ի վեր: Այդ նշանաբանը անպայման անհրաժեշտ է դիտւում ամէն մի յեղափոխական դիսցիպլինի մէջ, ո՞ր մնաց մերում: Այդ նշանաբանին յար և միշտ հետևող և գործի յառաջդիմութեան նախանձախնդիր գործող յեղափոխական մարմինը յոյս է տածում, որ հայ ժողովուրդի ողջխոհ, մաքուր ու անվթար մասը կ'աջակցէ յեղափոխական կրկեսում և նրանից դուրս գտնուող գործիչներին՝ դուրս շարժելու ասպարէզից նեխած, վարակիչ տարրերը և գլուխ բերելու նոյն նպատակին ձգտող և յեղափոխական գաղափարի անխարդախ դաւանող՝ հակամարտ ուժերի բաղձալի համադրութիւնը:

Թ Ի Ի Բ Բ Ի Ո Յ Ը Ո Ի Բ Զ Ը

Ամիսուկէս առաջ Անգլիոյ Քարտիֆ քաղքին մէջ հայերու օգտին միթիւնկ մը եղաւ, հեռուոր արծազանգ մը կը բնմտի խորիտ միտինկներուն, բայց աւելի հանգուն ու կծուանող ձայնարկով մը: Չարտասանւեցան սուլթանի դէմ այն աւանան (օրսուտ) ծառերն ու սպանալիքները որոնք երբեմն աշխարհ դրողեցին: Այն ժամանակներն էր որ «Թայմզ» սաւառնաթիւ կը գրէր «Թիւրքիան պէտք է լաւ գիտնայ որ Անգլիա, եթէ զրահաւոր մըն ալ մտայ իրեն, իր նպատակը ստաջ կը օժէ»:

Կամ ասոր մտն բան մը: Բայց այդ ամէնը կարծես լեզի ծօթէ արծկամ սլաքներ էին, սրտէ չէին բնար. որովհետեւ Համիդ անգլիական աստիճաններուն ու լրագրիչներուն փոքր-փոքուն արշաւանքին ղիմաց ամէնէն սարսափելի ողբերգութիւնը ներկայացուց եւ Անգլիան սիրտ չըբաւ իր կախարական խաղիկներն մէջ սուլթանի մը քիթը տրորակ, ինչպէս պիտի ընէին Մակըթիի վնուկները: Անգլիական զոռզոռներէն, e. ward (վատ) սուլթաններէն, մէկ բան մը միայն մասց «Մեծ Մարդասպան»՝ յաւիտենական անունը գոր Մեծ ժերունին մեհնար-դոռմեց պատմութեան էջերուն եւ մարդկային սրտին մէջ: Այդ կտորակ, եւ ամբողջ ղարավերջի մը խոյժի կայթը եղող անունն է որ երբեմնակ ուրուի պէս կը սլաւայ ջոպանիկ մարդկութեան թարթիչներուն կառչելով: Բայց Գլաշտոն չէր ուզէր ըսել թէ միւս ընտանոցներն ալ փինթի մարդասպաններ չէին:

Անգլիոյ մէջ հայերու ինպատ թիթեւ արթնցում մը, արեւելեան հարցին լաւատես ըտրոջին մէջ, ուշագրաւ է: Ամէրիկայի յաղթութիւնը՝ զոր ծածուկ կամ երեւ իրախուսեց Անգլիան, եւ որ յեղաշրջեց ղիւսնադիտական շատ մը նմադրութիւնները եւ անդրադարձում մը առաջ քերակ, ցարին ուրազ-չըջաբերականը, Կրէտէի ինտրին անդարձ լուծումը, Մէհ-դիի ջախջախումը, ծայրագոյն Արեւելի խճող կացութիւնը, Անգլիոյ ծովային պատրաստութիւնը, եւ ուրիշ թափառիկ իրողութիւններ ղիւսնադիտական նոր տեսակետի ու աշխարհայեցողութիւններ ստեղծեցին: Այս համաշխարհային խոռվրին առջեւ սակայն սփինքսը մունջ ու պիշ կեցած իր յաւիտենական հարցումը կընէ «Ղեկուղի, կրնաս նէ»:

Առանց անխօսակ սփինքսին առեղծուածը ղէն ընելու եւ միջազգային պարզուն երեւոյթներն անտեսելու, յեղափոխութիւնը պէտք է որ ակնկալուէ բայց ժիր ու կազմուկ շքահայեցողութիւն մը ու աշաւրջութիւն մը պահէ:

* * *

Քարտիճի ժողովը զուտ մարդասիրական էր: Համիդ, որ առաջ փութացած էր «մի ընէք» ըսել անգլիացիներուն պատրակելով թէ միւսիւսմաններուն զգացումները կը զբաղեն հայոց ղէմ: Երկու մասնաւոր սղագիր գացած էր ժողովը ատենագրելու եւ սուլթանին խրկելու համար: Համիդ անոր համատար պիտի շուկէր իր ջարդի ծրագրերը:

Ժողովը տեղի ունեցած է սեպ. 23-ին: Անգլիական 40 տարբեր քաղաքներէ ներկայացուցիչներ ժամադիր եղած էին միթիւնկին:

To part the glory of a happy day 1)
 Ժողովին նպատակն եղած է Անգլիոյ մէջ գտնուած ընկե-լութիւնները միացնել, ձեռք ձեռքի զործել եւ այլն: Ընէյս Բայս ժողովը բանալով յիշեց մասնաւորապէս թէ իրենց նըպատակն էր մարդասիրական միութիւն մը կազմել «հայոց բարեկամներուն» միջեւ եւ թէ ժողովը քաղաքական ո եւ է ղիտում չունէր: Նախ որ քաղաքական խնդիր հանելով անգլիական կառավարութեան զործերուն պծուող մը ըլլալէ զատ, անօգուտ պիտի ըլլար, քանի որ այժմ Կրէտէն կրկունքի ծանր կացութեան մէջ կը գտնուի: Ուստի խոհեմութիւն չէր կառավարութեան ուշադրութիւնը ցրել: Երկրորդ յիշելով սուլթանի շափազանց հետաքրքրելիւ տոյն ժողովով, անտեղի սեպեց զըզկո տալ մարդու մը որուն հետեւանքը պիտի ըլլար նորնոր ջարդեր:

Այս բացման ծառէն յետոյ Հայաստան ման գալող անգլիացիները իրենց զործունէութեան տեղեկագիրը ներկայացնելով ժողովին, շնչտեցին թէ թշուառութեան ըուն պատճառը սուլթանն եղած էր:

Քէմբրիճի պրօֆէսոր Հէրիս խօսեցաւ աւելի կրակոտ լեզուով: Ապա Սթիվենսըն առաջարկեց՝ որ ընկերութիւնը իր աշխատութիւնը շարունակէ մինչեւ որ հայերը արտաքին ո եւ է ծփնութեան կարօտ չունենան:

Երեկոյն քաղքին մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ հրապարակային ընդհանուր մեծ ժողովը որուն կը նախագահէր Լէնդիճի լորտ եպիսկոպոսը: Ընէյս Բայս հայոց պատմութիւնը Քսէնօֆոսէն մինչեւ մեր օրերը ազուր եւ վճիտ կերպով համատարածեց իր հարց դրաւ թէ իրենց ինչ պարտականութիւն ունէին ասանկ աննշան ու օտար ազգի մը օգնելու: «Նախ՝ իբր մարդ անհար էր անգլայ մաւ թիւրք պետութեան զործած խժողութիւններուն եւ ժողովրդի մը անհուն թշուառութեան հանդէպ: Երկրորդ՝ քաղաքականապէս պարտաւոր էին հետաքրքրուիլ հայերով քանի որ երբեմնի սխալ քաղաքականութիւնով մը մերժած էին Ռուսիոյ արեւելեան հարցը համարաշխօթէն լուծելու ըրած առաջադրը եւ Թիւրքիոյ համար պատերազմ հրատարակած էին Ռուսիոյ ղէմ, արեւելեան քրիստոնեաներու պաշտպանութիւնը խլելով Ռուսիոյ ծանկէն:

1) Երջանիկ օրանս մը փառքին կցորդ ըլլալու համար:

Վերջին ղէպերու միջոցին Ռուսիա, իբր վրէժ, հականգլիական ուղղութիւն մը բռնեց. իսկ միւս պետութիւնները անվտանգ նայեցան Անգլիոյ վրայ: Պ. Բայս անցեալի տրամաբանութիւնով աղէտներու պատասխանատուութեան մեծ մուրքը Անգլիոյ ծիրը ձգեց:

Երրորդ յիշելով հայոց ընտանեկան կեանքի մարքութիւնը ու պարզութիւնը, անոնց քաղաքակրթելու ընդունակութիւնը ու ծիւղութիւնը, ըսաւ, կ'արժէ որ այս սեսակ տոկուն դարերու ազգ մը քաղաքակրթութեան ծճարիտ ծամրուն մէջ ղնենք:

Սթիվենսըն հերքելով այն թիր կարծիքը թէ հայերը ինքզինքնին կառավարելու անընդունակ են՝ թւեց ըտրոջ հայ պետական, ղիւսնական ու կրօնական անճաւարութիւնները որոնք զանազան պետութեանց կամ իրենց ազգին մէջ բարձր տաղանդի եւ ընդունակութեան հիմնալի հաւաստեքը տաւ նա:

Քէմբրի Մէքքըլ եպիսկոպոսը անկեղծ բայց կծան լեզուով մը յորդորեց սուլթանը որ հայերուն պէս օգտակար տարր մը փոխանակ հալածելու, ոչնչացնելու, սիրաշահի, շոյէ. քանի որ անոնք երկիրն մեծ ծառայութիւն կրնան մատուցանել իրենց խաղաղ ապրեցողութեան մէջ: Հասկցուց սուլթանին թէ ինք բարեկամ կարծածները իր թշնամիներն են որոնք լէշուտող գազաններու պէս իրենց որսը լաւ մը կը ցլցցնեն, կը ծղմն առանց զօրի կլլելու համար:

Սուլթանին շուտով իմաց ըրին ըտրոջ խօսքը տոկնեքը. բայց խալիֆան, ղարուս ամէնէն մեծ հեգնողը եւ չկատողը, ծիծաղ մը ըրաւ անշուշտ, մութգնտան խաւարում ամպերու մէջէ կածկտող շանթի մը պէս, եւ հոլտաց «Խընզը կեալուրաբ, ղեւ իմ՝ զօրքս շին ծանչեք...» որովհետեւ, ինչպէս կան համարներ, որոնց մէջէն ամբողջ ազգի մը հոգին կը ցուցայ ազատութեան արծանի մը զլիւուն վրայէն ծառագած լոյսին պէս, այնպէս Համիդի անճաւարութիւնը կը մարմնացնէ ազգի մը ամէնէն տխուր, ամէնէն գարշ մասնութիւններու հատընտիր ժողովածուն, ուր ներշնչած ամէն բարութիւն, մարդկային ամէն վեմ գզացում կը սնքին ու կը թոշին անխածինի մէջ փակուող կենդանութիւններուն պէս. ծղքեցէք անոր հոգին, հոն պիտի գտնէք արդարութեան, բարութեան, գթութեան մեռնիւնը անգթութեան ծիրաններուն ու սարսափի արեւնտրիկ ծալքերուն տակ հոգեփշած...:

Սկզբունքով որքան ալ մարդասիրական սահմանին մէջ պիտի ժուր գար ժողովը, բայց պտօնի ցատկերէ ու փոխաբերութիւններէ զուրկ չէր:

Ներկայ միջազգային կուճակ զուգորդութիւններուն, արեւելեան հարցին սուր կացութեան, Թիւրքիոյ տեսաես վիճակին մէջ, մարդասիրական սահմանէն դուրս շնչիլ իմաստութիւն չէր: Մանաւանդ որ անցեալի դերեւ փորձերը, խօսքի ումպերը օղային պումպեր միայն առաջ բերին եւ ոչ ուրիշ բան: Անգլիան այս պահուս, ինչպէս կ'ըսեն, «ձեռքը կրակն» է ոչ այն հասարակածի կրակը զոր շուտով մարեց. այլ այն նկայ «բոյութեան կոել»՝ զոր կը մըէ հողագնդիս ամէն պիտրու՞մ վրայ, ուր անգլիական զիտակցութիւնը իր գոյութիւնը հաստատած ու սա մեծամիտ վճիռը արձակած է Rule Britannia (աշխարհավարէ, Բրիտանիա):

Սուլթանի միջազգային քաղաքականութեան մասին վերջին ծառը անգլիական արձամարտու մեծամտութեան նմոյշ մըն էր: Նախարարապետը խորհրդաւոր եւ առածգական հետաքրքրութեան մը տակ, անգլիական կամէութեան ու վճռականութեան ներքող մը ընելով տեսակ մը նախագաղաշութիւն կը քարոզէր եւրօպական ազգերուն որ շմտեսան իրենց: Այդ ծառը որքան ալ մտքերը հանդարտեցնելու խաղեր կը պարունակէր մէջը, բայց նախարարապետը, իր լաւատես աշխարհայեցողութեան վրայ յոռետեսութեան շղարջ մը ձգեց ապագայի տեսակետով: «Մըրքկամ մը կը բարձրանայ հօրեգօնը այնքան արագութիւնով որ ամէն հաշիւ կ'արհամարհէ» ըսաւ: Յետոյ ընկերա-փիլիսոփայական հարցերու մէջ մտնելով, ինչպէս կը սիրէ ընել այդ խոհուն ազագունն եղէ գը, թիթեւնոգի անփութութիւնով մը զլորցուց, «Խարխլակ պետութիւններ կան որոնց կառավարութիւնները այնքան գէշ են որ ոտքի վրայ անգամ չեն կշնար կեանակ, ոչ ուժ ունին ինքնապաշտպանութեան, ոչ ալ իրենց հըպատախներուն սէրն ու գորովը կը վայելն»: Սուլթանի այդ թէ գը նախորդ ծառի մը մէջ աւելի պարզաբանած է, եւ ընտանեան ընտրողութեան սկզբունքին վրայ հիմնած: Բայց այդ «գէշ պետութիւններու» ամէնէն խոշորը Թիւրքիան ըլլալու է: Սուլթանի իր ակնարկութիւններուն մէջ յաճախ քաղաքատեան երբ կ'ընտրէ Համիդի անուշիկ երկիրը, որուն վրայ անգլիական նախարարապետը շնչի չափ հաւատք չունի. ալ կորած է իրեն համար անիկա, թաղուցը պէտք է ընել միայն:

Այդքան խորին յոռետես մը ըլլալով հանդերձ պետութեան մը մասին որ իր վարտիքը անգամ չի կշնար կապել, ու անոգ նստիւ, ձգել կրկիքը իր ընական վիճակին եւ հան-

դիստոն ԵՂԱԼ մարդկային արժանապատուութիւնը ցնխոտող լքութիւններու, Սոլզբրիի իրաւաշտ փիլիսոփայութիւնը արդարացում չի գտնել, զոնէ թիչ մը ըմբոստացում անհրաժեշտ է:

Տոճան ու նաստը Ալբիոնը, նոր աշխարհի շնչովը հոգեւորած, զոնէ պիտի կրնայ իր խոշորխոշոր գոտոգութիւններուն, փրոնէ առաձնեղուն հաւաստիք մը տալ իր խղճին ու պատիւին պարտքը կատարելով: Այն ատեն կարելի պիտի ըլլայ ըսել «Անգլիական խորհրդարանը ամէն բան կարող է ընել, բացի մարդ մը կին, կամ կին մը մարդ ընելէ»:

* * *

Կրէտէն ալ ողջնցաւ. պատմութիւնը ալ պիտի զոցէ սարսափներուն սահմանը. տառօսը ուրիշներուն: Պետութիւնները անողոք կամքի ուժով մը, թիւրք զինուորներուն ու իշխանութիւններուն բռնները շալակին կուտան կը ճամբեն, թիւրք զինուորի մը շուրջ չպիտի մայ հոն: Բրիտանիաները պատրաստութիւն կը յայտնեն զինաթան ԵՂԱՐԸ: Պետութեանց դրօշները կը ծածանին կղզիին մէջ որոնց քով խեղճորէն կ'երեւայ օսմաննան աղտոտ դրօշը: Զարդի նոր հինգ անգլիականներ նս կախեցան:

Լուր կը շրջի թէ պետութիւնները Կրէտէն կողք Փոքր Ասիոյ ու Մակէդոնիոյ խնդիրը առջև պիտի դնեն:

Դուր չորս պետութիւններուն հօթը կէտով ծանուցագիր մը խրկած է որով կը խնդրէ որ Կրէտէն կայսրութեան ամբողջութեան մասը մայ. Օսմանեան դրօշը գործածել կղզիին մէջ. Դատարարութիւնը սուլթանի անունով ըլլայ. բաւականաթիւ զինուոր մայ կղզիին մէջ սուլթանի վերահստութեան իբր նշան, կայսեր զանձուն հաստատ սուրբ մը տրել եւ այլն:

Վերջապէս կրէտցիք փափայուն հասան. հրէջ Մէնուարը սպաննեցին: Աւերող է ըսել թէ այդ անձուկը ժողովուրդը, ինչպէս ամէն ժողովուրդ որ թիւրքիոյ անիծնալ տուէն պրծած է, պիտի բաւէ դէպք քաղաքակրթութիւն ու թիւրքերը սրտի ցաւով մը պիտի մրմռան. «մեր ծնողէն ելած երեւան սիւտճի ու խեղճ ազգերը մայր կ'ըլլան, մինք 600 տարւան մեծ պետութիւն մը տգէտ ու զեանին զամաձ մայցնիր»:

Վախ ձեզի, բայց օխ ԵՂԱՐԸ:

Վ Ա Ր Պ Ե Տ Ի Ն

ՋրնԱԳՈՐԹ ԿԱՐՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ 1)

Զարկ, զարկ, այ վարպետ, չէկ կայծեր թոցուր, Կռանէ սալբդ, ձե տուր մետաղիդ. Բամի տուր փուքսիդ, թոքերն ուռեցուր, Արծարծէ՛ բոցը հանգած հընոցիդ:

Ժանգոտ բիրտ երկաթըն «օճախը» խրէ Անձե երկաթիդ բերան շինէ սուր, Դժոխքի բոցով բարկ մետաղը ճըզմէ Ձե տուր պողպատին, կոփէ՛, փայլեցուր:

Չար բախտն երկաթին կապեց մարդուս կեանք, երկաթն է վճռող սե ու կարմիր օր. Առանց երկաթին արգարն անվըտանգ Ե՛րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր:

Այդ նենգ ուղին փշոտ ու մթին Յատակագիծը արիւնն է գծած. Խեղճ ու զորկեալին, սարուկ-գերիին Իրաւունք վճռող լոկ սուրը մնաց:

Երկաթն երկաթին կը փշրէ մէկ օր, Եսն ու բռնութիւն կը դառնան գերի. Շուռ կուգայ աշխարհք. գերին դարեօր Կը փոխի աէրի, և ոխը՝ սէրի:

1) Կարծես Արիստակէս Զօրեանն է, Խաչատուրի հերոսներէն մէկը. տես «Դրօշակ» № 16 — 1897: Ժ. Խ.

Ուժով զարկ, վարպետ, կայծերդ թոցուր, Հանգած հընոցիդ մէջը կատարի Ահեղ վրէժի դրժուք բըռընկցուր, Որ շուտով փշրես շլթաք ստրկի:

ԱՎՕ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ատացած է՝

Յիւրիսէն՝ Ժանր 5 ֆրանք:

ՏԱՊԱՐ Կեդր. Կօմիտէն՝

Օգոստոս ամսու մուտք. — Զրվէժ շրջ. 27 դահեկան, Շրփոթ շրջ. 10, Գեղձուկ շրջ. 10, Սուլիշ շրջ. 35, Բողոք շրջ. (յունիս, յուլիս, օգոստոս եւ սեպտ.-ի ամսավճար) 65, Աշուկերտ 10, Հրաշ շարթավճար 5, եւս 5:

Սեպտ.-ի մուտք. — Զրվէժ շրջ. 27 դահեկան, Սուլիշ շրջ. 35, Գեղձուկ շրջ. 10, Շիոթ 10, Հրաշ (շարթավճար) 5, Ա. Բ. Թ. 20, Մ. Բ. շրջ. 10:

ՎԻՃԱՊԻ «Մահ» Կօմիտէն՝

Կախարան 44 դահեկան, Փէնքլոն, Ջրվէժ, Կ. Հարաբու, Աշտարակ 20-ական, Մօսին 18, Տարծոնց, Կամաւոր, Վարդ, Սեպուր 10-ական, Դաւիթ Բէկ, Զ. Փ. Երևան 5-ական:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կօմիտէն՝

Որոտում խ. 10 դահեկան, Արիւն խ. 20, Շանթ խ. 8, Ռուքինեան խ. 11, Հարհիմ 20 եւս 20, Թովմաս գաւթա 5, Օշարակ 20 (չորս ամսավճար), Բլուր քաղաքէն 140, Սեւ Բերդէն 8. Պ. Յուսարդը 20:

ՆԱԻԱՅԱՆԳՍԻ Կօմիտէն՝

Կարմիր քաղաքէն. Լեւոն 300 ուրբի, Երկրագործ 250, Շարա 100, Բարի մարդ 50, Յովաննէս 30, Ներսէս 20, Տէնիզ, Նազարէթ, Արշալոյս, Վրթանէս 15-ական, Ե. Գ. 5, Զրաշէնի կանանց Անահիտ խմբի միջոցով Կարմիր քաղաքի մասնաձեռնէն 16: Գումար 831 ուրբի:

Ժերունի 100 ուրբի, Սիմոն 20, Գասպարիկ 15, Հարատունի, Արշակ 5-ական, Ժառ 3, Տէնի, Մարշ, Լամպա, Աշտարակ, Նահապետ 2-ական, Զրաշէնի Կ. Անահիտ խ.-էն Կարմիր քաղաքի մասնաձեռնի նահաձեռնութեամբ վիճակահանութեան զուտ արդիւնք 98. 80, Մայր քաղաքէն Աշտ Երկաթ 300, № 44 100: Գումար 656 ուրբի 80 կօպէկ:

Կոյս քաղաքէն՝ Վարդ 6 ուրբի Արամ 4, Հացիկ 3, Արաքս, Արդարասէր, Սիւրբան, Ժաղիկ, Երկաթ, Արսէն, Արշակ, Վաղարշակ, Զգոյշ, Արամայիս, Հեմանի 2-ական, Սիզար 1: Գումար 36 ուրբի:

Երեք բանտարկեալի համար կանանց «նորաբայ» խմբից 88 ուրբի, Տ. Կատար 3, Տ. Օսկինատ 2, Զորթան 1: — Նոր-Բերդից 3. Գ. 50, Տ. Աննա, Ե. Գ., Կ. Օ. 15-ական, Գ. Տ., Ա. Ն., Գ. Թ., Ե. Մ. 10-ական, Ս. Վ., Ս. Գ. 5-ական, Պ. Վ. 3, Տ. Խաչատր, Տ. Զարդար, Ս. Մ., Դ. Դ., Գ. Գ. 2-ական, Ե. Բ. 1 ու կէս, Ա. Թ., Ա. Գ., Ե. Ե., 3. Թ., Ե. Խ., Ե. Բ. մէկմէկ: — Սեւոզերից՝ Միկիլ 10: Ամարանոց քղ.-ի «Մահ» խ. 25: «Մահ» խ.-ի ստացած նւէրներ — Սահակ Գալ. Խաչատրեան, Գրիգոր Ստ. Թամամեան մէկմէկ: Գումար 296 ու կէս ուրբի:

Համագումար 1,820 ուրբի 30 կօպէկ:

ԿԱՅԻՐԵԻ Կօմիտէն՝

Վասակ Սուրէն 40 դահեկան ողջ, Գեղամ 20 եւս 20, Կայծակ 20, Բոնոնցք խ. 20, Հայկազ 10, Ասլան 5: Գումար 135 դահեկան՝ ողջ:

Վ Ր Ի Պ Ա Կ. — № 8 (89) Նաւահանգստի ցուցակ Կարմիր քաղաքի Պարիշնիկ ուղղիկ Պուտիլնիկ: Կոյս քաղաքի Վարպետ, Նայիմ, Շարաման, Արզար ուղղիկ Վարդ, Հայեւ, Շարական, Սիզար: Մոռցած է Արամ 22 ուրբի:

Նոյն թիւն մէջ Բալկանեան Կ. Կօմիտէ Սահմանք 40 ֆրանք սխալմամբ կրկնած է. տես № 6 (86)-ի ցուցակ:

Խմբագրութեան ղիմել Հեռեւեալ Հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)